

5670



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«20» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 060 - 24

Նախաձեռնողը՝

«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյանի 34/1

Գործունեությունը՝

Ապարան համայնքի Շենական բնակավայրի դպրոցի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 060 - 24
< 20 > Տպխար 2024թ.

Ապարան համայնքի Շենավան բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Շենավան բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ «Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շենավան բնակավայրում նախատեսվում է կառուցել դպրոց: Դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում՝ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և ՀՀ կառավարության աջակցությամբ, իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (ՀՏՀՀ):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ապարան համայնքի կողմից տրամադրված 2022թ. նոյեմբերի 25-ի N92 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 2,8692 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 02-082-0054-0050), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շենավան բնակավայրի 19-րդ փողոցի թիվ 32 հասցեում գործող դպրոցի տարածքում: Շենավանի դպրոցի նախագծվող շենքը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, քանդվելու է գործող շինությունը բարձր վթարային ռիսկայնության /IV/ պատճառով: Հաշվի առնելով հին դպրոցի կառուցման ժամանակ հիդրոմեկուսացման աշխատանքների արդյունքում շենքի խոնավությունը և ստորերկրյա ջրերի առկայությունը՝ հաստատված 1.2-1.3 մ խորության վրա՝ դպրոցի կառուցման համար նախատեսվել է գրունտային ջրերի հեռացման (դրենաժային) համակարգ (նախագիծը մշակվել է ՀՀ գործող նորմերի և կանոնների համաձայն)՝ ապահովելով բացված հիմնափոսերում ջրահեռացում 10լ/վրկ ծավալով, գրունտային ջրերի առկայությանը



պայմանավորված իրականացվելու են դպրոցի կառույցի սեյսմանվտանգությունն ապահովող այլ միջոցառումներ:

Գոյություն ունեցող ցանկապատը քանդվելու է նոր դպրոցը կառուցելուց հետո:

Դպրոցի տարածքում գոյություն ունի բարձր լարման էլեկտրահաղորդման օդային գիծ և ենթակայան, որը տեղափոխվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Դպրոցի տարածքում առկա է հուշարձան՝ կիսանդրի, որը տեղափոխվելու է իրավասու մարմնի համաձայնությամբ:

Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության՝ գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է միջին բարձրության սարավանդի վրա, ռելիեֆը հարթ է, նիշերի տատանումը մինչև 1 մետր: Տարածքի ռելիեֆի ծագումնային տիպն արտահայտված է ալուվյալ-դելուվյալ նստվածքներով: Գրունտային ջրերի մակարդակը հասնում է մինչև 1,2-1,3 մ: Ստորերկրյա ջրերը թույլ ճնշումային են: Տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 բալլ սեյսմակայունությամբ: Գրունտներն արտահայտված են ճալաքարա-կոպճային ջրահագեցվածությամբ: Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները բացակայում են:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նոր դպրոցի կառուցման նպատակն է աշակերտների ուսուցումը կազմակերպել անվտանգ, բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, նոր չափորոշիչներով կառուցված շենքում:

Դպրոց տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես՝ 28692,00 մ²,
- ✓ ընդհանուր կառուցապատման մակերես (շենքեր և հարթակներ, կաթսայատուն, ենթակայան)՝ 3194,40 մ²,
- ✓ կանաչապատման մակերես՝ 13667,10 մ²,
- ✓ ֆուտբոլի դաշտի կանաչ մակերես՝ 2166.80 մ²,
- ✓ գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի կանաչ մակերես՝ 933,40 մ²,
- ✓ ասֆալտապատվող մակերես՝ 2541,35 մ²,
- ✓ սալվածքի մակերես՝ 3639,05 մ²,
- ✓ սպորտհրապարակ և խաղահրապարակներ ռետինե ծածկով՝ 1339,60 մ²,
- ✓ տրիբունաների, դաշտերի եզրամասերի և ցանկապատի մակերես՝ 1210,30 մ²:

Նախատեսվում է հիմնական ուսումնական մասնաշենքի կառուցում Ա.Բ,Գ,Դ մասնաշենքերով, նոր ֆուտբոլի դաշտի կառուցում և գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի վերանորոգում, կաթսայատուն: Նախատեսվող դպրոցը լինելու է երեք հարկանի՝ կիսանկուղային հարկով 15,30 մ առավելագույն բարձրությամբ: Սալվածքների ծածկերն ու հարթակները նախատեսված են «տոմետ» տիպի: Գոյություն ունեցող դաշտը մնում է անփոփոխ, իսկ նոր կառուցվողը՝ խոտածածկույթով: Ճանապարհները, բաց ավտոկայանատեղին նախատեսված է երկշերտ ասֆալտ, իսկ վազքուղին իրականացվելու է ռետինե ծածկով: Մասնաշենքերի տանիքները երկթեք են, ծածկերը միաձույլ ե/բետոն, հիմքերը՝ ժապավենային:

Թիվ 32 նոր կառուցվող հանրակրթական դպրոցը նախատեսված է առավելագույնը՝ 288 աշակերտ, 400 մարդ ընդհանուր հզորությամբ:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան տեղադրվելու են ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգեր: Արևային

Ֆոտովոլտային համակարգը կառուցվելու է 2700 մ² մակերեսով տանիքի վրա, որտեղ ԱՖՎՎ-ների զբաղեցրած մակերեսը կազմում է 558.22 մ², իսկ տարածքի մնացած մասը (2141.78 մ²) ծառայելու է ենթակառուցվածքների սպասարկման և ստվերների ազդեցությունից խուսափելու համար: Փոխակերպիչների դրվածքային հզորությունը կազմում է 120 կՎտ, ԱՖՎՎ-ների դրվածքային հզորությունը՝ 119.88 կՎտ:

Հրդեհաանվտանգության նպատակով շենքերում տեղադրվելու է հակահրդեհային հիդրատներով և օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային (հակածխային) արտածման համակարգեր: Շենքի նկուղային հարկում տեղադրվելու է 2 հատ 50 մ³ տարողության ջրի բաքեր: Դպրոցի շենքն ապահովվելու է էվակուացիոն ելքերով, տեղադրվելու է 2 վերելակ:

Շենքն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում դպրոցի էլեկտրամատակարարումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի: Գոյություն ունեցող գազատարը պողպատյա է, տրամագիծը 57 մմ, գազատարի նվազագույն և առավելագույն ճնշումները՝ 1,0-1,5 կգ/սմ²: Ջերմամատակարարումն իրականացվելու է նոր կառուցվող կաթսայատան միջոցով (81,37 մ²):

Ջրամատակարարումը և ջրահեռացումը կատարվելու է d=90x5, 4մմ, p=10 մթն. ճնշումով ջրատարից՝ գոյություն ունեցող համակարգերով՝ համաձայն Ապարանի համայնքապետարանի Արագածի կոմունալ ծառայության կողմից տրված տեխնիկական պայմանի: Տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով ուղղորդվելու են բակային ցանց:

Կենցաղային կեղտաջրերի համար տեղադրվելու է 15 մ³/օր հզորությամբ մաքրման կայան, որի հզորությունը հաշվարկվել է համաձայն դպրոցի ընդհանուր թվաքանակի հզորության: Կատարվելու է կենսաբանական մաքրում Թ-ՔՊ և Թ-ԿՊ նվազեցում մինչև 95%՝ օգտագործելով միկրոպղպշակներ և բիոֆիլտրեր: Ավելցուկային տիղմը հեռացվելու է: Պարզեցված ջուրը հնարավոր է օգտագործել ոռոգման նպատակով:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 28 ամիս, որից՝ քանդման աշխատանքները տևելու են 4 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Շինարարության ընթացքում տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են թրթուրավոր էքսկավատոր, բուլդոզեր, թրթուրավոր կունկ, ավտոբետոնախառնիչ, ավտոինքնաթափեր, ձեռքի գործիքներ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, ֆիբրոցեմենտ, փայտ, մետաղ, ամրանային ձողեր, երեսպատման սալիկներ, տուֆ, ապակի, ներկ և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որից արտադրական հրապարակի ընդհանուր մակերեսը կազմելու է 2560 մ², որտեղ պահեստավորվելու և

կայանվելու են շինանյութերը և շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում, շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան (0,84 մ³): Պարզեցված ջուրը կօգտագործվի արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադք:

Բետոնի շաղախը պատրաստվելու է տեղում ավտոբետոնախառնիչի միջոցով:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքների ժամանակ հանույթը կազմելու է 4611,70 մ³, ետ լիցքը՝ 1127,70 մ³: Օգտագործվելու է բերովի գրունտ՝ 5159,60 մ³ համայնքապետարանի համաձայնությամբ, ընդհանուր լիցքը կազմելու է 9771,30 մ³:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է (5400 կգ/տարի) և շինարարական աղբը (ներառյալ քանդման աշխատանքներից՝ 7476,90 մ³): Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կազմելու է 7758,55 մ³: Շինարարության փուլում առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝ յուղոտված լաթեր, կտորների տեսքով ազբեստի թափոններ և այլն:

Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը: Շինարարական վտանգավոր թափոններ պարունակող շինադքը տեղափոխվելու և տեղադրվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Խմելու ջուրը վերցվելու է տարածքի հարևանությամբ անցնող ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ: Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Տարածքում տեղադրվող 5 տ տարողության բաքի մեջ լցվող տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կամ անձանց կողմից համաձայն կապալառու կազմակերպության կողմից կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն և բարեկարգումն իրականացվելու է ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Ապարանի համայնքապետարանի հետ:

Իրականացվելու է 13724.35 մ² մակերեսով կանաչապատում ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին՝ ծառատնկման և սիզամարգերի միջոցով: Ընկերության համապատասխան մասնագետի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն՝ դպրոց տանող ճանապարհի վրա և դպրոցի բուն տարածքում առկա 58 բարդիներից հատվելու են վնասվածները՝ մասնավորապես փտածները, փոխարենը տնկվելու են՝ կեղծ ռուբախ /ակացիա/ (15 հատ), հացենի (33 հատ),

բարդի (30 հատ), եղևնի (30 հատ): Սիզամարգերում կատարվելու է համահարթեցում՝ կարմիր ավազի կազմով: 1916 խմ ծավալով հողի բերրի շերտը կհանվի և կպահպանվի ՀՀ կառավարության որոշման պահանջներին համաձայն: Կանաչապատման նպատակով պահեստավորված բուսահողը չբավարարելու դեպքում ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ կաթիլային եղանակով, օգտագործվելու է նաև նախատեսվող մաքրման կայանից դուրս եկող ջուրը:

Հայտում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով և ֆինանսական միջոցների խոշորացված հաշվարկով:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 300,0 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Գործունեության ենթակա տարածքում գոյություն ունեցող բարձր լարման էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը տեղափոխվելու են նախքան նախատեսվող գործունեության աշխատանքների մեկնարկը՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվների պահպանմամբ:

Գրունտային ջրերի առկայությամբ պայմանավորված դպրոցի սեյսմակայունությունը ապահովելու համար իրականացվելու են միջոցառումներ, տեղադրվելու է նաև դրենաժային համակարգ 10լ/վրկ հզորությամբ՝ համաձայն «Արևանոտեխ» ՍՊԸ կողմից տրամադրված եզրակացության:

Փորձաքննական գործընթացին մասնակից կառույցներն են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Ապարանի համայնքապետարանը, Արագածոտնի մարզպետարանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ապարան համայնքի Շենավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային քննարկում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Փորձաքննական պահանջներ

1. Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը իրավասու մարմինների կողմից ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
3. Ծառահատման և կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայնեցված Ապարանի համայնքապետարանի հետ՝ ապահովելով Հայտով ամրագրված բարեկարգման և կանաչապատման լուծումները:
4. Դպրոցի տարածքում գտնվող բարձր լարման էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը տեղափոխել՝ համաձայնեցված «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ:
5. Աշխատանքային նախագիծը ներկայացնել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատուն, վերելակ և այլն) կառուցումը իրականացնելու դեպքում:
6. Քանդման աշխատանքների և քանդման արդյունքում առաջացող թափոնների, այդ թվում վտանգավոր թափոնների հեռացման ձևը, եղանակը, ինչպես նաև կազմակերպված սանիտարական աղբավայրում տեղադրումն իրականացնել համապատասխան ՀՀ գործող իրավական ակտերի և իրավասու մարմնի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շենավան բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝


Աստղիկ Վարդանյան

